ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-6-7-Ա

ք. Երևան 10.07.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հուլիսի 10-ի նիստում քննարկեց 2022 թվականի հունիսի 17-ին Ա. Բաբայանի կողմից ներկայացված՝ «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության (Երևան 0061, Մասիսի 31, AM) «PLATINUM 999.9» (No20210805) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող (Choco-Diffusion S.A. Le Crêt-du-Locle 13 CH-2300 La Chaux-de-Fonds (CH), IR-635444, 13.04.1995, IR-654028, 29.03.1996) ծավալային ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 126-րդ կետի 1-ին, 3-րդ ենթակետի, 127-րդ կետի 1-ին, 2- րդ, 4-րդ ենթակետերի և 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում ավելի վաղ գրանցված ծավալային ապրանքային նշաններն ամբողջությամբ ներառված են հայտարկված նիշի մեջ և, չնայած հայտարկված նիշում առկա գրառումների առկայությանը, համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են միմյանց հետ ընդհանուր տեսողական տպավորությամբ, արտաքին տեսքով և նրանց բնույթով, սիմետրիայի առկայությամբ, պատկերների՝ սեղանաձև տեսքով:

Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ շվեյցարական «Choco-Diffusion SA» ընկերության կողմից օգտագործվող ծավալային ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է https://goldkenn.com/en և http://www.cdgroup.ch/en/societe/goldkenn?fbclid=IwAR1UIRpfinqjEDrLqvr7MiKRcz7pB3OT8INdJ8DCAoTF85iRH3H1Ch6Ocp0 ինտերնետային կայքերում, որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին: Հայտատուի ներկայացուցիչը ներկայացրել էր դատարանի վճիռը հակադրված երկու ապրանքային նշանների գրանցումները (Choco-Diffusion S.A. Le Crêt-du-Locle 13 CH-2300 La Chaux-de-Fonds (CH), IR-635444, 13.04.1995, IR-654028, 29.03.1996) չեղյալ հայտարարելու վերաբերյալ, սակայն բողոքում որևէ հիմնավորում չէր ներկայացվել որոշման մեջ նշված մյուս հիմքի վերաբերյալ այն է՝ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ շվեյցարական «Choco-Diffusion SA» ընկերության կողմից օգտագործվող ծավալային ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է

https://goldkenn.com/en և http://www.cdgroup.ch/en/societe/goldkenn?fbclid=IwAR1UIRpfinqjEDrLqvr7MiKRcz7pB3OT8INdJ8DCAoTF85iRH3H1Ch6Ocp0 ինտերնետային կայքերում, որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն .

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա. Բաբայանի կողմից ներկայացված «Գրանդ քենդի» ՍՊԸ ընկերության «PLATINUM 999.9» (No20210805) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ